

Բովանդակ Երուսաղէմ կը ծանշնար արդէն Վոլոտը. հիմայ կը հետաքրքրուէին Շղթայակիրին. որ մը յառաջ Աթուին վրայ կ'ուզէին տեսնել զինքը լարուած հիացումով մը: Շղթայակիր ծամբայ ելաւ ցամաքէն. ծամբան՝ Հալպէն անցաւ, «բազում միւլէր» գնեց հոն Երուսաղէմի համար. նորոգեց տեղոյն «հոգեւորներ», եւ 1721 փետր. 12ին Երուսաղէմ մտաւ միջազգային եւ խանդավառ ընդունելութիւններով: Ծովն ու ցամաքը իրարմէ չզատեցին բնաւ Վոլոտի եւ Շղթայակրի սրտերը. միշտ միախորհուրդ, միակամ աշխատեցան:¹

Շղթայակիրին մեծագործութիւններն՝ այլ եւս Երուսաղէմի վանքին մասնաւոր պատմութեան կը վերաբերին.² իր մանրամասն եւ բազմադիմի

1 Գրիգոր Դսիր (Յայսմաւուրք) կը յիշատակագրէ թէ «եւ յորժամ Գրիգոր Վարդապետն ի Սաղիմ գնալոյ եղև՝ Յովհաննես Վարդապետն կրկին Ֆերման էհան թէ՛ քանի Գրիգոր Վարդապետն կենդանի մնայ, պատրիարքութիւն յուրիշ մարդոյ չի տրվի», զիտողութիւն մը, որ ենթադրել կու տայ թէ որչափ նախանձոտներու առջեւ գտնուած է Վոլոտ, որ կրկին կրկին հրովարտակներով հաստատել կու տայ Երուսաղէմայ պատրիարքութեան բաժանումը:

2 Գիտել կու տանք այստեղ թէ Վոլոտ եւ Շղթայակիր իրենց ծանր զբաղումներուն մէջ շմոռցան իրենց սիրելի Ամրառը: Գիտենք արդէն թէ Վարդան Վրդ.ի վախճանումէն եւ իրենց մեկնումէն ետքը խոնարհած էր «համալսարան»ին փառքը. բայց գտնէ կրնար իր առաջնութեան դիրքը պահել Ամրառը՝ Բաղէշի միւս վանքերուն վրայ. բայց այդպէս չեղաւ. լսելով զեղծումներն ու անտարբերութիւնները, երկու պատրիարքներ կոնդակ մը գրեցին Բաղէշ 1169 (= 1720) Յունիս 25ին, Շղթայակրի Երուսաղէմ ուղեւորէին յառաջ: Այդ կոնդակը, աւմիօրէնով գրուած, հրատարակեցի «Բիւզանդիոնի» Մուլէ-Պիլիկը յօդուածներու շարքում. այս տեղ միայն խորագիրը կը դնենք ցուցնելու համար թէ որչափ սերտիւ կապուած էին երկու վարդապետներ իրարու հետ եւ ինչ սէր կը տածէին